

Վարդապետի բուռն եռանդը բարեզարդելու եկեղեցին, կանոնաւորելու ժամասացութիւնը, վարժեցնելու պատանիները եկեղեցական պաշտամանց եւ պատրաստելու զանոնք պատշաճաւոր կրթութեամբ քահանայական աստիճանի, եւ վերջապէս լուսաւորելու ժողովուրդը քարոզութեամբ՝ բախեցաւ սաստիկ ընդդիմութեան տեղական եկեղեցական իշխանութեան կողմէն: Եպիսկոպոս թէ արեւոյս, որոնք թոյլ ու գեղծ կեանք մը կ'ապրէին, փոխանակ զգաստանալու վարդապետին քարոզութիւններէ եւ անոր շինարարական եւ առաքելական գործունէութեան օժանդակելու՝ ի սկզբան ծաղրեցին անոր վարդապետութիւնը, ապա սպառնական դիրք բռնեցին անոր հանդէպ, նոյն իսկ աշխարհական ատենի առջեւ հանեցին զինքը: Կը պատմէ Դաւրիթեցի, թէ Աստապատի մէջ, երբ ուղեց վարդապետը ընդառաջ գալով ժողովրդեան խնդրանքին՝ ընդարձակել եկեղեցին, ահազին աղմուկ բարձրացուցին արեղաները, սրովհետեւ հարկ էր եղած եկեղեցւոյն կից խուցերը վար առնել: Միտարան դիմեցին անոնք Նախավկայի վանքը եւ բողոք ներկայացուցին առաջնորդին խափանելու համար եկեղեցւոյն նորոգութիւնն եւ ընդարձակումը: Թէպէտ ամէն քար շարժեցին անոնք կասեցնելու գործը, բայց վարդապետը «ամենեւին ոչ լքաւ ի բարւոք յառաջադիմութենէն»:

Խնդիրը ելաւ Մեղքիսեղեկ կաթողիկոսին ատենանը. նաեւ անիկա «բազում անգամ ա-